

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հեղինե Բիշարյանի, Հովհաննես Մարգարյանի և Լևոն Դոխոյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Փակ բաժնետիրական ընկերություններին հարկային արտոնություններ տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (*Պ-1049-02.09.2016-ՏՀ-010/0*) վերաբերյալ:

Համաձայն ներկայացված օրենքի նախագծի 4-րդ հոդվածի՝ արտոնության տրամադրման անհրաժեշտությունը և նպատակն առավելապես պայմանավորված են փակ բաժնետիրական ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացման, նոր աշխատատեղերի ստեղծման, գործողների պահպանման, ներդրումների ներգրավման և հանրային կյանքի սոցիալական խնդիրների հասցեական լուծման, հասարակության հիմքը կազմող միջին խավի ձևավորման և կայացման տեմպերի արագացման պահանջներով: Թվարկված են նաև արտոնությունների տրամադրման նպատակները:

Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ՝

1) ներկայացված նախագծով հստակ ու ամբողջությամբ չեն կանոնակարգվում հարկային արտոնությունների տրամադրման գործընթացը, սահմանված չեն հարկային արտոնության տեսակները, դրանց կիրառման դեպքերն ու շրջանակները: Նման չկանոնակարգված հիմնախնդիրներով ներկայացված նախագիծը դեկլարատիվ բնույթ է կրում և չի կարող ծառայել օրենքի ընդունման անհրաժեշտությունը հիմնավորող նպատակների իրագործմանը:

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով սահմանվում են հարկային արտոնությունների այն տեսակները, որոնք կարող են սահմանվել հարկային օրենսդրությամբ, մինչդեռ նախագիծը չի պարունակում որևէ դրույթ այն մասին, թե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հարկային արտոնության տեսակներից որն է նախատեսվում տրամադրել փակ բաժնետիրական ընկերություններին, ուստի նախագիծն այդ մասով չի թղթակցում «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին: Համաձայն «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների՝ պետական քաղաքականությունն իրականացվում է համապատասխան ոլորտները կարգավորող գործող օրենքներով, մասնավորապես, «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և մի շարք այլ կարգավորող օրենքներով, որոնցով սահմանվում են համապատասխան ոլորտներում հարկային արտոնության հիմնական ուղղությունները և այդ ոլորտում պետական քաղաքականության իրականացման սկզբունքները.

2) փակ բաժնետիրական ընկերություններին հարկային արտոնությունների տրամադրումն ուղղակիորեն կհակադրվի հարկման հավասարության սկզբունքին և կնշանակի խտրական ու անհավասար մոտեցումների կիրառություն, քանի որ նախագծի ըն-

դունման դեպքում կստացվի, որ միայն կազմակերպաիրավական տեսակով պայմանավորված՝ որոշ ընկերությունների տրամադրվում են հարկային արտոնություններ, իսկ միևնույն պայմաններում գործող, սակայն կազմակերպաիրավական այլ տեսակ ունեցող ընկերություններն այդ արտոնություններից օգտվելու իրավունք չեն ստանում: Այդպիսի մոտեցումները տնտեսության մեջ առողջ մրցակցությունը խաթարելու իրական ռիսկեր են առաջացնում.

3) նախագծով ներկայացված մեխանիզմները բավարար չեն «հարկային արտոնություններ» տրամադրելու համար և հակասում են «Հարկերի մասին», «Հարկային ծառայության մասին» ու առանձին հարկատեսակների մասին Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներին:

Բացի դրանից՝

1) նախագծի 3-րդ հոդվածով սահմանված «Փակ բաժնետիրական ընկերություն» հասկացությունը վերանայման կարիք ունի, քանի որ «օրենքով սահմանված կարգով հարկային մարմիններում գրանցված առևտրային կազմակերպությունները» ոչ միայն փակ բաժնետիրական ընկերություններ կարող են լինել, այլ նաև կարող են ունենալ իրավակազմակերպական այլ ձևեր՝ բաց բաժնետիրական ընկերություններ, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ և այլն (փակ բաժնետիրական ընկերության սահմանումը տրված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով).

2) նախագծի 5-րդ հոդվածով սահմանվում է արտոնությունից օգտվողների շրջանակը, ըստ որի սույն օրենքով սահմանված արտոնությունից կարող են օգտվել այն փակ բաժնետիրական ընկերությունները, որոնց նախատեսվող տարվա տարեկան հարկվող շրջանառությունը կազմում է նվազագույնը 16 միլիարդ դրամ: Այլ կերպ ասած՝ նախա-

գիծը տարածվելու է ոչ միայն փակ բաժնետիրական ընկերությունների նկատմամբ, այլև առհասարական բոլոր առևտրային կազմակերպությունների, օրինակ, բաց բաժնետիրական ընկերությունների նկատմամբ: Ընդ որում, հարկ է նկատել, որ նախագծով առաջարկվող հարկվող շրջանառության շեմի պայմաններում նախագիծը վերաբերելու է նաև այնպիսի ընկերությունների, ինչպիսիք են հանքարդյունաբերության ոլորտում գործունեություն իրականացնող ընկերությունները, ինչն անընդունելի է:

Նույն հոդվածում հստակ չէ, թե որ օրենքի իմաստով «տարեկան հարկվող շրջանառության» մասին է խոսքը և պարզ չէ, թե ինչպես և ով պետք է որոշի «նախատեսվող տարվա հարկվող շրջանառությունը»: Բացի դրանից, հիմնավորման կարիք ունի նաև նվազագույն հարկվող շեմի չափը.

3) նախագծի 7-րդ հոդվածում նշվում է, որ տնտեսավարող սուբյեկտը հարկային տեսչությանն է ներկայացնում տեղեկանք՝ նախատեսվող տարվա «հարկվող *եկամյրի*» վերաբերյալ: Կարծում ենք, որ տնտեսավարող սուբյեկտի ներկայացրած տեղեկանքը բավարար չէ «նախատեսվող տարվա» համար նրան «հարկային արտոնություն» տրամադրելու համար.

4) նախագծի 8-րդ հոդվածով սահմանվում է հարկային տեսչությունների կողմից փակ բաժնետիրական ընկերությանն արտոնությունից օգտվողի կարգավիճակ տրամադրելու կարգը, սակայն հոդվածը չի պարունակում հարկային արտոնությունից օգտվելու դիմումը մերժելու հիմքերի վերաբերյալ որևէ դրույթ:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված խմբագրությամբ նախագիծը ենթակա չէ քննարկման: Նախագծի լրամշակված տարբերակը ներկայացնելու դեպքում այն լուրջ մասնագիտական քննարկման կենթարկվի:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարար Սուրեն Կարայանը:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Փակ բաժնետիրական ընկերություններին հարկային արտոնություններ տրամադրելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում
կարգավորման

- 1 «Փակ բաժնետիրական ընկերություններին հարկային արտոնություններ տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:
2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:
3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:
Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

Եզրակացություն

«Փակ բաժնետիրական ընկերություններին հարկային արտոնություններ տրամադրելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Փակ բաժնետիրական ընկերություններին հարկային արտոնություններ տրամադրելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**.

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **դրական ազդեցություն**:

ՀԱԿԱԿՈՒՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Փակ բաժնետիրական ընկերություններին հարկային արտոնություն տրամադրելու մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Փակ բաժնետիրական ընկերություններին հարկային արտոնություն տրամադրելու մասին» ՀՀ օրենքի նախագիծն իր մեջ պարունակում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի 3-րդ, 5-րդ ենթակետերով նախատեսված կոռուպցիոն գործոններ, որոնք դրսևորվում են լիազորությունների հայեցողական լայն շրջանակի, ինչպես նաև կարգավորման բացերի առկայությամբ:

Մասնավորապես, Նախագծի 8-րդ հոդվածում սահմանվում է հարկային տեսչությունների կողմից փակ բաժնետիրական ընկերությանն արտոնությունից օգտվողի կարգավիճակ տրամադրելու կարգը, սակայն հոդվածը չի պարունակում հարկային արտոնությունից օգտվելու դիմումը մերժելու հիմքերի վերաբերյալ որևէ դրույթ, ինչը կարող է հանգեցնել տարածքային հարկային տեսչությունների՝ հարկային արտոնություն տրամադրելու իրավասության կամայական մեկնաբանման: Նախագծի 1-ին հոդվածում օրենքի կարգավորման առարկայի շրջանակներում նախատեսված է նաև արտոնության տրամադրման կասեցումը, մինչդեռ Նախագիծը չի պարունակում կասեցման ընթացակարգի վերաբերյալ որևէ դրույթ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

«Փակ բաժնետիրական ընկերություններին հարկային արտոնություններ տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Փակ բաժնետիրական ընկերություններին հարկային արտոնություններ տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Փակ բաժնետիրական ընկերություններին հարկային արտոնություններ տրամադրելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)՝ տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

Նախագիծը՝ գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագծով առաջարկվում է փակ բաժնետիրական ընկերություններին տրամադրել հարկային արտոնություններ, մինչդեռ հասկանալի չէ, թե խոսքը ինչպիսի հարկային արտոնությունների մասին է:*

Միաժամանակ, Նախագծով հարկային արտոնությունից կարող են օգտվել այն փակ բաժնետիրական ընկերությունները, որոնց նախադրվող փարվա փարեկան հարկվող շրջանառությունը կազմում է նվազագույնը 16 միլիարդ ՀՀ դրամ: Հարկ է նշել, որ հարկային արտոնությունների տրամադրումը՝ կախված տնտեսավարող սուբյեկտների կազմակերպատիրավական տեսակից կամ իրացման ծավալներից, տնտեսության մեջ կստեղծի անհավասար մրցակցային պայմաններ:

Նախագծի ընդունման և կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է **բացասական ազդեցություն:**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Փակ բաժնետիրական ընկերություններին հարկային արտոնություններ տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Փակ բաժնետիրական ընկերություններին հարկային արտոնություններ տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվում է կարգավորել փակ բաժնետիրական ընկերություններին հարկային արտոնություններ տրամադրելու հետ կապված իրավահարաբերությունները, մասնավորապես՝ սահմանվում են արտոնությունից օգտվողների շրջանակը, արտոնության տրամադրման նպատակը, ժամկետները, կասեցումը, ինչպես նաև սույն արտոնությունից չօգտվող գործունեության տեսակների ցանկը:

Նախագծով կարգավորվող շրջանակներն ուղղակիորեն առնչվում են փակ բաժնետիրական ընկերությունների կողմից արտադրվող ապրանքների, վերջիններիս կողմից կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների շուկայի հետ (բացառությամբ՝ Նախագծի 5-րդ հոդվածում նշված՝ արտոնությունից օգտվողների շրջանակը և 9-րդ հոդվածում նշված՝ արտոնությունից չօգտվող գործունեության տեսակները): Նախագծի ընդունման պարագայում, նվազագույնը 16 մլրդ դրամ տարեկան շրջանառություն ունեցող ՓԲԸ-երի նկատմամբ կցուցաբերվի տարբերակցված մոտեցում հարկային արտոնությունի տրամադրման եղանակով, էականորեն կնվազեն շուկայում գործող որոշ ընկերությունների ծախսերն ի համեմատ այլ գործող ընկերությունների, ինչն կհանգեցնի վերոնշյալ շուկաներում անհավասար մրցակցային պայմանների ձևավորմանը:

Հիմք ընդունելով նախնական և ազդեցության գնահատման բուն գործընթացի փուլերի արդյունքները՝ արձանագրվում է Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա **բացասական ազդեցություն հայտնաբերելու** եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Փակ բաժնետիրական ընկերություններին հարկային արտոնություններ տրամադրելու մասին»
ՀՀ օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման
վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է հարկային արտոնություններ տրամադրել փակ բաժնետիրական ընկերություններին: Միաժամանակ, նախագծով սահմանված չեն, թե ինչպիսի հարկային արտոնություններ է նախատեսվում տրամադրել փակ բաժնետիրական ընկերություններին: Մասնավորապես, սահմանված չէ, թե որ հարկատեսակների մասով ինչ արտոնություններ է նախատեսվում տրամադրել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ ներկայացված տեսքով նախագծի ընդունման ազդեցությունը պետական բյուջեի ու համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի վրա կլինի չեզոք:

Պ-1049-02.09.2016-SՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը կարգավորում է փակ բաժնետիրական ընկերություններին հարկային արտոնություն (այսուհետ՝ արտոնություն) տրամադրելու հետ կապված Հայաստանի Հանրապետության եւ նշված տնտեսվարող սուբյեկտների իրավահարաբերությունները, արտոնությունից օգտվողների շրջանակը, արտոնության տրամադրման անհրաժեշտությունը, նպատակը եւ ժամկետները, արտոնության տրամադրման կասեցումը, ինչպես նաեւ սահմանում է սույն արտոնությունից չօգտվող գործունեության տեսակների ցանկը :

Հոդված 2. Օրենքի գործողության ոլորտը

Սույն օրենքի գործողությունը տարածվում է փակ բաժնետիրական ընկերությունների կողմից իրականացվող գործունեության վրա (բացառությամբ՝ սույն օրենքով սահմանված գործունեության տեսակների):

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունը

Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունն է՝

1. Փակ բաժնետիրական ընկերություններին՝ սույն օրենքի իմաստով փակ բաժնետիրական ընկերությունը սահմանվում է որպես օրենքով սահմանված կարգով հարկային մարմիններում գրանցված առեւտրային կազմակերպություններ, որոնք ունեն վարձու աշխատողներ՝ բացառությամբ ընդհանուր ժողովի անդամների:

Հոդված 4. Արտոնության տրամադրման անհրաժեշտությունը եւ հիմնական նպատակները

Արտոնության տրամադրման անհրաժեշտությունը առավելապես պայմանավորված է փակ բաժնետիրական ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացման, նոր աշխատատեղերի ստեղծման, գործողների պահպանման, ներդրումների ներգրավմամբ եւ հանրային կյանքի սոցիալական խնդիրների առավել հասցեական լուծման եւ ժամանակակից հասարակության հիմքը կազմող միջին խավի ձեւավորման եւ կայացման տեմպերի արագացման պահանջներով: Արտոնության տրամադրման հիմնական նպատակներն են.

1. Փակ բաժնետիրական ընկերություններին (այսուհետ՝ ՓԲԸ) ոլորտում գործարար եւ ներդրումային միջավայրի բարելավումը
2. ՓԲԸ սուբյեկտների տնտեսական գործունեության շահութաբերության բարձրացումը
3. ՓԲԸ գործունեության համար լուրջ խթանների ստեղծումը
4. ՓԲԸ սուբյեկտների հարկային բեռի կրճատումը
5. ՓԲԸ սուբյեկտների շրջանառու միջոցների ընդլայնումը
6. Հայրենական արտադրության խթանումը
7. Նոր աշխատատեղերի ստեղծումը

Հոդված 5. Արտոնությունից օգտվողների շրջանակը

Սույն օրենքով սահմանված արտոնությունից կարող են օգտվել այն փակ բաժնետիրական ընկերությունները, որոնց նախատեսվող տարվա տարեկան հարկվող շրջանառությունը կազմում է նվազագույնը 16 միլիարդ դրամ:

Հոդված 6. Արտոնության տրամադրման ժամկետները

Արտոնությունը տրամադրվում է փակ բաժնետիրական ընկերություններին՝ սույն օրենքի 7-րդ հոդվածի առաջին մասով սահմանված փաստաթղթերի հարկային մարմին ներկայացման օրվանից:

Հոդված 7. Հարկային տեսչություն ներկայացվող փաստաթղթերի փաթեթը

Սահմանված արտոնությունից օգտվողի կարգավիճակ ստանալու նպատակով տնտեսվարող սուբյեկտը տարածքային հարկային տեսչություններ պարտավոր է ներկայացնել.

1. Դիմում՝ հարկային արտոնությունից օգտվելու վերաբերյալ
2. Տեղեկանք՝ վարձու աշխատողների վերաբերյալ
3. Տեղեկանք՝ նախատեսվող տարվա հարկվող եկամտի վերաբերյալ:

Հոդված 8. Հարկային տեսչությունների կողմից փակ բաժնետիրական ընկերությանը արտոնությունից օգտվողի կարգավիճակ տրամադրելը

Տարածքային հարկային տեսչությունները, տնտեսվարող սուբյեկտներից ստանալով սույն օրենքի 7-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերը, պարտավոր են եռօրյա ժամկետում ուսումնասիրել եւ տրամադրել տեղեկատվություն տնտեսվարող սուբյեկտին արտոնությունից օգտվողի կարգավիճակ ստանալու վերաբերյալ:

Հոդված 9. Արտոնությունից չօգտվող գործունեության տեսակները

սույն արտոնությունը չի տարածվում

1. Վարկային կազմակերպությունների
2. Ապահովագրական կազմակերպությունների
3. Ներդրումային հիմնադրամների
4. Գրավատների
5. Փոխանակման կետերի
6. Արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների
7. Խաղատների եւ շահումով խաղերի կամ վիճակախաղերի կազմակերպման գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների
8. Աուդիտորական կամ խորհրդատվական ծառայություններ մատուցողների
9. Ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրողների
10. Լիցենզավորման ենթակա այն գործունեություն իրականացնող կամ լիցենզիա ունեցող այն անձի նկատմամբ, որի գործունեության լիցենզիայի համար պետական տուրքի տարեկան գումարը սահմանված է 100 հազար դրամ կամ ավելին, ինչպես նաեւ դուստր եւ կախյալ տնտեսական ընկերությունների վրա:

Հոդված 10. Եզրափակիչ մաս

Եթե Հայաստանի Հանրապետության անունից կնքված եւ վավերացված միջազգային պայմանագրերում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը:

Հոդված 11. Անցումային դրույթներ

Սույն օրենքն ուժ մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

1. Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ տեղի ունեցած կառուցվածքային փոփոխությունները, երկրում իրականացվող տնտեսական քաղաքականությունը նոր պահանջներ են ներկայացնում մասնավորապես փակ բաժնետիրական ընկերությունների (ՓԲԸ) զարգացման ուղղությամբ:

Մասնավորապես՝ անհրաժեշտություն է առաջացել վերանայել ՓԲԸ ոլորտին հարկային արտոնությունների տրամադրման չափորոշիչները, ինչն էլ կհանգեցնի պետական աջակցության առավել նպատակային իրականացման: Ըստ էության, սույն նախագծով ընդլայնվում է ՓԲԸ ոլորտին պետական աջակցության ուղիները: Ավելին՝ ՀՀ տնտեսության հետճգնաժամային եւ ստեղծված իրավիճակը պահանջում է սոցիալական եւ հանրային մեծ նշանակություն ունեցող ՓԲԸ, այդ թվում՝ ՓԲԸ զարգացման համար ձեւավորել համարժեք եւ բարենպաստ մրցակցային պայմաններ: Գործունեությունը նոր սկսող ՓԲԸ սուբյեկտների համար անհամեմատ կնվազեն շուկա մտնելու, կայանալու խոչընդոտները, կծեւավորվի առավել արդյունավետ ներդրումային միջավայր: Օրենքի ընդունումը կբարելավի նաեւ ՓԲԸ սուբյեկտների ֆինանսական գրավչության մակարդակը: Նվազագույն 16 մլրդ դրամ տարեկան շրջանառություն ունեցող ՓԲԸ-ները հենց այն թիրախն են, ում նկատմամբ պետությունը պետք է ցուցաբերի տարբերակված մոտեցում հարկային արտոնությունների տրամադրման տեսքով: Մասնավորապես՝ «Նաիրիտ Գործարան» ՓԲԸ-ի նկատմամբ:

Հաշվի առնելով հանգամանքը, որ «Նաիրիտ Գործարան» ՓԲԸ-ի արտադրանքը ունի բացառիկ նշանակություն ինչպես ՀՀ-ում, այնպես էլ համաշխարհային շուկայում, ինչպես եւ հանգամանքը, որ «Նաիրիտ Գործարան» ՓԲԸ-ի վերագործարկումը ողնաշարային եւ ռազմավարական նշանակություն ունի ՀՀ տնտեսության գիտատար ուղղությունների զարգացման համար, ապա խիստ անհրաժեշտ է սույն օրենքի ընդունումը, որը կնպաստի նաեւ նոր խոշոր ներդրողների ներգրավմամբ: Սույն օրենքի շրջանակներում նվազագույն 16 մլրդ դրամ շրջանառության ամրագրումը բխում է ,Ավելացված արժեքի հարկի մասին Հայաստանի Հանրապետության գործող օրենքի տրամաբանությունից: Սույն արտոնությունից օգտվող տնտեսվարող սուբյեկտների մոտ հարկային պարտավորությունների նվազեցումից, մասնավորապես՝ շահութահարկից, եկամտահարկից եւ ավելացված արժեքի հարկի ազատումից առաջացած գումարները մի կողմից կհանգեցնեն ձեռնարկություններում ներդրումների ավելացմանը, մյուս կողմից՝ կծեւավորեն վճարունակ պահանջարկ, ինչն էլ շղթայական ձեւով դրականորեն կանդրադառնա ՀՀ տնտեսության աշխուժացման վրա:

2. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը.

Սույն օրենքի ընդունումը էապես կբարելավի ՓԲԸ-ների բիզնեսի կայացման եւ հետագա զարգացման պայմանները, կստեղծի գրավիչ ներդրումային միջավայր այս ոլորտի ընդլայնման համար: Սա նաեւ լուրջ քարշակ դեր է նշանակություն կունենա քննարկվող ոլորտում նոր ներդրումների ներգրավման համար: Սույն օրենքի ընդունումը նաեւ հանրային եւ սոցիալական մեծ նշանակություն կունենա դրական սպասումների առումով: